# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/291**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16271-2021 գրությամբ «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 28.09.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-8056 գրության հիման վրա, 06.10.2021թ. թիվ 26/26-1/16271-2021 գրությամբ նախաձեռնել է «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/291 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:55-ին և 05.11.2021թ. 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ դատական դեպարտամենտը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.09.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-8056 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ են ներկայացվում դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-21/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/291 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 09:55-ին և 05.11.2021թ. 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/291 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/291 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ դատական դեպարտամենտի և «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 05.05.2021թ. կնքվել է թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1» ծածկագրով պետության կարիքների համար կապալային

աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օր: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

3. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ շենքերի, շինությունների /Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կապան քաղաքի նստավայրի/ ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը նախատեսվել է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, իսկ ավարտը՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում:

4. Պատվիրատուն «ԱԳԼ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 17.09.2021թ. թիվ ԴԴ-1-Ե-7772 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն Դատական դեպարտամենտի և Ձեր ընկերության միջև 2021 թվականի մայիսի 5-ին կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1 պայմանագրի 1.3-րդ կետի՝ շինարարական աշխատանքները պետք է կատարվեին Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրացույցային օրվա ընթացքում: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ է մտել սույն թվականի մայիսի 7-ին և Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել սույն թվականի հունիսի 21-ը ներառյալ:

Դատական դեպարտամենտի 17.06.2021 թվականի թիվ ԴԴ-3-Ե-4665, 22.06.2021 թվականի թիվ ԴԴ-3-Ե-4806, ինչպես նաև՝ 09.07.2021 թվականի թիվ ԴԴ-3-Ե-5325 գրություններով Դուք տեղեկացվել եք Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները ժամանակին չկատարելու դատարանի բնականոն գործունեության խաթարման մասին:

Համաձայն Պայմանագրի 3.1.2 կետի՝ Դատական դեպարտամենտը 09.07.2021 թվականին թիվ ԴԴ-3-Ե-5325 գրությունով՝ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար սահմանել է աշխատանքների կատարման նոր՝ 20 աշխատանքային օրյա ժամկետ, սակայն մինչ օրս այդ աշխատանքները կատարված չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 1.3-րդ և 3.4.5-րդ կետերով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներով տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը միակողմանի լուծում է Պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 27.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

**<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16271-2021 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 28.09.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-8056 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ դատական դեպարտամենտի և «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 05.05.2021թ. կնքվել է թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ սահմանված ծավալաթերթ-նախահաշվով

նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օր: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ շենքերի, շինությունների /Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կապան քաղաքի նստավայրի/ ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը նախատեսվել է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, իսկ ավարտը՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 11.06.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Դատական դեպարտամենտի և «ԱԳԼ» Գրուպ» ՍՊԸ-ի միջև 05.05.2021թ. կնքված ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1 ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի ժամկետը ըստ պայմանագրի ժամանակացույցի լրանում է 19.06.2021թ.-ին: Խնդրում եմ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել ևս 30 օրացույցային օրով»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ դատական դեպարտամենտը Ընկերությանն ուղղված 17.06.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-4665 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր գրությամբ ներկայացված խնդրանքը՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտի կողմից կքննարկվի 2021 թվականի մայիսի 5-ին կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1 պայմանագրով կապալային աշխատանքների կատարման

համար սահմանված ժամկետի երկարաձգման հարցը՝ Ձեր կողմից ժամկետի երկարաձգման համար համապատասխան հիմնավորում ներկայացնելու դեպքում:

Միաժամանակ հարկ եմ համարում հիշեցնել նաև, որ վերոհիշյալ պայմանագրով Կապալառուի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, Պատվիրատուն միջոցներ կձեռնարկի ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման համար»:

Ընկերությունը Պատվիրատուին ուղղված 18.06.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

Ի պատասխան դատական դեպարտամենտի գնումների համակարգման բաժնի կողմից «ԱԳԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ուղղարկված Ե-4665 գրության համաձայն, «ԱԳԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ներկայացնում է ժամկետի երկարացմանը վերաբերվող հիմնավորում:

Ուսումնասիրելով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կապանի նստավայրի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը, եկանք հետևյալ մասնագիտական եզրակացության: Ծավալաթերթ-նախահաշվի առաջին կետը՝ որը եղել է ոչ կոնստրուկտիվ սխալ, այն է 3 սմ հաստությամբ ցեմենտ-ավազե շերտի փոխարեն ապամոնտաժել ենք հարթ տանիքի ջրամեկուսացման շերտը (իզոգամ), և բիտումային հեղուկ մածիկի վրա կատարել ենք ջրամեկուսացման շերտի (իզոգամի) մոնտաժային աշխատանքներ:

Ավելացնեմ որ շինաշխատանքներին խոչնդոտել են նաև ոչ բարենպաստ անձրևային եղանակային պայմանները»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ դատական դեպարտամենտը Ընկերությանն ուղղված 22.06.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-4806 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր գրությամբ ներկայացված հիմնավորումը՝ տեղեկացվում է, որ համաձայն Դատական դեպարտամենտի և Ձեր ընկերության միջև 2021 թվականի մայիսի 5-ին կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.3-րդ կետի՝ շինարարական աշխատանքները պետք է կատարվեին Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ է մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ է մտել սույն թվականի մայիսի 7-ին, այնինչ Ձեր համապատասխան մասնագետների կողմից շինարարական աշխատանքներն սկսվել են մայիսի 28-ին՝ քսան օր ուշացումով: Ավելին, հինգ օր հետո՝ հունիսի 2-ից այդ աշխատանքներն անհայտ

պատճառներով դադարեցվել են և նորից վերսկսվել են նույն թվականի հունիսի 8-ին, որոնք անկանոն կերպով՝ ընդհատումներով, շարունակվել են մինչև հունիսի 18-ը ու կրկին անհասկանալի պատճառներով դադարեցվել: Ըստ էության, Ձեր կողմից Պայմանագրով սահմանված շինարարական աշխատանքները կանոնավոր կերպով իրականացնելու պարագայում՝ 45 օրացուցային օրը լիովին կբավարարեր այդ աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

Ինչ վերաբերում է Ձեր այն պնդմանը, որ շինարարական աշխատանքների ծավալաթերթ-նախահաշվի 1-ին կետում եղել են անհամապատասխանություններ, որի պատճառով շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում չեն ավարտվել, ապա նշված պնդումը հիմնավոր չէ, քանի որ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում Ձեր կողմից երբևէ հարց չի բարձրացվել տվյալ խնդրի վերաբերյալ:

Միաժամանակ, հարկ եմ համարում ևս մեկ անգամ հիշեցնել, որ վերոհիշյալ պայմանագրով Կապալառուի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ պատշաճ կատարման դեպքում, Պատվիրատուն միջոցներ կձեռնարկի ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված պատախանատվության միջոցների կիրառման համար»:

ՀՀ դատական դեպարտամենտը Ընկերությանն ուղղված 09.07.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-5325 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով տեղեկացվում է, որ համաձայն Դատական դեպարտամենտի և Ձեր ընկերության միջև 2021 թվականի մայիսի 5-ին կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1 պամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.3 րդ կետի՝ շինարարական աշխատանքները պետք կատարվեին Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրուցուցային օրվա ընթացքում: Պայմանագլուվ նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ է մտել սույն թվականի մայիսի 7-ին և Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել սուլն թվականի հունիսի 21-ը ներառյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից շինարարական աշխատանքներն սկսվել են բավականին ուշացումով և շարունակվել ընդհատումներով ու մինչ օրս ավարտված չեն, այդ իսկ պատճառով, հիմը ընդունելով Պայմանագրի 3 րդ կետի 3.1.2 րդ

ենթակետը, Դատական դեպարտամենտը սահմանում է նոր ժամկետ՝ 20 աշխատանքային օր, շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով:

Միաժամանակ, հարկ եմ համարում ևս մեկ անգամ հիշեցնել, որ Պայմանագրով Կապալառուի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, Պատվիրատուն միջոցներ կձեռնարկի Պայմանագրի միակողմանի լուծման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման համար»:

Պատվիրատուն «ԱԳԼ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 17.09.2021թ. թիվ ԴԴ-1-Ե-7772 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն Դատական դեպարտամենտի և Ձեր ընկերության միջև 2021 թվականի մայիսի 5-ին կնքված թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1 պայմանագրի 1.3-րդ կետի՝ շինարարական աշխատանքները պետք է կատարվեին Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրացույցային օրվա ընթացքում: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ է մտել սույն թվականի մայիսի 7-ին և Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել սույն թվականի հունիսի 21-ը ներառյալ:

Դատական դեպարտամենտի 17.06.2021 թվականի թիվ ԴԴ-3-Ե-4665, 22.06.2021 թվականի թիվ ԴԴ-3-Ե-4806, ինչպես նաև՝ 09.07.2021 թվականի թիվ ԴԴ-3-Ե-5325 գրություններով Դուք տեղեկացվել եք Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները ժամանակին չկատարելու դատարանի բնականոն գործունեության խաթարման մասին:

Համաձայն Պայմանագրի 3.1.2 կետի՝ Դատական դեպարտամենտը 09.07.2021 թվականին թիվ ԴԴ-3-Ե-5325 գրությունով՝ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար սահմանել է աշխատանքների կատարման նոր՝ 20 աշխատանքային օրյա ժամկետ, սակայն մինչ օրս այդ աշխատանքները կատարված չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 1.3-րդ և 3.4.5-րդ կետերով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներով տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը միակողմանի լուծում է Պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 27.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

***<u>բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),</u>***

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ դատական դեպարտամենտի միջև 05.05.2021թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/01-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.10.2021թ. թիվ 26/26-1/16271-2021 գրությամբ «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱԳԼ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**